ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԱՎԻԱՑԻԱՅԻ ԿՈՄԻՏԵԻ
ՆԱԽԱԳԱՀ

ք. Երևան
«05» 01 2023թ.

ՈՐՈՇՈՒՄ N 34
ՎԱՐՉԱԿԱՆ ՏՈՒՅԺ ՆՇԱՆԱԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսգրքի (այսուհետ՝ Օրենսգիրք) 119-րդ հոդվածի 1-ին պարբերության, 227-րդ հոդվածի 2-րդ պարբերության 1-ին կետի պահանջներով,

հիմք ընդունելով ՀՀ ոստիկանության Երևան քաղաքի վարչության «Զվարթնոց» օդանավակայանի գծային բաժնի 2022 նոյեմբերի 17-ի թիվ 20-2465 գրությամբ Քաղաքացիական ավիացիայի կոմիտե ուղարկված «Հայկական ազգային ավիաուղիներ» փակ բաժնետիրական ընկերության («ՖԼԱՅ ԱՐՆԱ») կողմից 2022 թվականի նոյեմբերի 16-ին Մոսկվա-Երևան թիվ 66406 թռիչքի օդանավի անձնակազմի կողմից կազմված՝ ներքին անվտանգության պատահարների իրազեկման թերթիկը, «Արմենիա միջազգային օդանավակայաններ» փակ բաժնետիրական ընկերության «Զվարթնոց» Մ/Օ ավիացիոն անվտանգության ծառայության կողմից կազմված 2022 թվականի նոյեմբերի 16-ի թիվ 40 արձանագրությունը, համաձայն որի՝ Հայաստանի Հանրապետության քաղաքացի Սարգիս Սուրենի Սարիբեկյանը ծխել է օդանավում,

հաշվի առնելով «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքով սահմանված կարգով հարուցված վարչական վարույթի շրջանակներում քննարկվող փաստական հանգամանքների վերաբերյալ կարծիք ներկայացնելու համար

կայանալիք լսումներին մասնակցելու վերաբերյալ Հայաստանի Հանրապետության քաղաքացի Սարգիս Սուրենի Սարիբեկյանին պատշաճ ծանուցելու («Ազդարար» տեղեկատվական կայքի պաշտոնական հայտարարության միջոցով) և վերջինիս կողմից լսումներին չներկայանալու փաստական հանգամանքները՝

Որոշեցի.

1. Հայաստանի Հանրապետության քաղաքացի Սարգիս Սուրենի Սարիբեկյանի /ք.Երևան, Մալաթիա-Սեբաստիա վարչական շրջան, փ.Շերամի, 31շ., 13բն., ՀՀ անձնագիր AR0675133 տրված՝ 02.05.2018թ.-ին 008-ի կողմից/ նկատմամբ նշանակել տուգանք՝ սահմանված նվազագույն աշխատավարձի հարյուրապատիկի չափով՝ 100 000 (մեկ հարյուր հազար) ՀՀ դրամ:

2. Տուգանքը պետք է վճարվի Կենտրոնական գանձապետարանի 900005240461 հաշվեհամարին՝ սույն որոշումը սահմանված կարգով Սարգիս Սուրենի Սարիբեկյանին հանձնելու օրվանից ոչ ուշ, քան տասնհինգ օրվա ընթացքում:

3. Սույն որոշումը կարող է բողոքարկվել օրենքով սահմանված կարգով և ժամկետներում:

Восстановимая подпись

X

ՄԻՀՐԱՆ ԽԱՉԱՏՐՅԱՆ

Подписано: KHACHATRYAN MIHRAN 3308540266 ՄԻՀՐԱՆ ԽԱՉԱՏՐՅԱՆ